

VII.

ԲԱՆԱԻՈՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Որպէս երաժշտական եղանակները կորսուել են, նոյնպէս և չկայ ո՛չ մի բանաստեղծութիւն, ո՛չ մի երգ: Այն երկու կտոր բանաստեղծութիւնը որ ես մէջ եմ բերում, նոր շինած բաներ են. մէկի հեղինակն իսկ (Ուստա Վանօն) այժմ կենդանի է և Ալէքսանդրապօլի բոշաների աթոռակալի եղբայրն է:

Այդ կտորները ըստ երևոյթին յանպատրաստից շինած բաներ են, աշղների հետ վիճաբանելիս: Նրանց հաւաքել է պ. Ե. Լալայեանը և տպել «Ազգ. Հանդէս»-ի մէջ (գ. ա.), բայց ես նորից վերստուգեցի և բոշաների լեզուի հետ բաւական ծանօթ լինելով, աշխատեցի աւելի ուղիղը գրել նրանց:

Ա. Ե Ր Գ.

Աւէ հոսել, կմրո՛ւկ խաթէ, ականա՛ւ նա պարես պաւհո ^{*)}
Աթըս կուքվեմ մերաւիդ՝ դռտի կը խլաւիդ
Աթ մը կայէն, չղար կայէն, լուի կայէն, ակ կայէն:
Աւեր վեսեր էք դուգահիս, կէ կու մանգէք տէրաւէս
Սամէլ կամաւտիք փանեցէք, սիսաւէս ջէ խլաւիս,
Աթ մը կայէն, չղար կայէն, լուի կայէն, ակ կայէն:
Հանէս-օղլին պակրեց, լո՛մ եմ, ուշարեցէք տլարիս,
Կամ մը դանես, հակվէն աւէ, աթաւէս լէ դմրաւիս
Աթ մը կայէն, չղար կայէն, լուի կայէն, ակ կայէն:

^{*)} Բոշայական բաց ա-երը նշանակում եմ սովորական տառով, իսկ փակերը շեղագրով:

Թարգմանութիւն

Եկ արտեղ, երդուիր որ մէկ էլ ոտքս չընկնես
 Չեռքս կը նետեմ դէպի քեզ՝ կը ցնդի խելքդ
 Հինգ անգամ, չորս անգամ, երկու անգամ, մէկ անգամ:
 Եկել նստել էք մօտս՝ ինչ էք ուզում ինձնից
 Լաւ բաներ ասացէք, գլխիցս խելքս գնում է
 Հինգ անգամ, չորս անգամ, երկու անգամ, մէկ անգամ:
 Հանէս-օղլին ասաց՝ բռնա եմ, միտներդ պահէք անուս
 Թէ բան գիտես՝ առաջ արի, ձեռքիցս առ ջութակս
 Հինգ անգամ, չորս անգամ, երկու անգամ, մէկ անգամ

Բ. Ե Ր Գ.

Աւէ իննաւ հոսել, վեսէ դուգահիս,
 Բիեմ՝ մանուս աւէ, նա լես տլարիս:
 Ես բուհու կամ զանեմ, նա ֆենուս թալիս.
 Հեվիս լորիցիր իսա՝ մանուս ես՝ մանուս:
 Աւեմ վեսեմ հոսել, կէ դարէս բաշտաս
 Սամլիկարեմ ճահրին, բանթեմ կու դաստաս
 Ճլու կորէ, կուչեմ՝ նա աւես բաշտաս.
 Հեվիս լորեցիր իսա՝ մանուս ես՝ մանուս:
 Ուստա Վանոն պակրեց տերաւէն՝ թաջլիս
 Կամ նա զանես իսա՝ մօ պեսեր մաջլիս
 Ճուճոտվիմ կու բաշտադ՝ սնանես կու զիս:
 Հեվիս լորիցիր իսա՝ մանուս ես՝ մանուս:

Թարգմանութիւն

Ե՛կ տղա՛ արտեղ, նստիր մօտս
 Վախեմ մարդ գալ՝ անուսս չալտնես.
 Ես շատ բան գիտեմ, ընկերս չես կարող լինել
 Ինձ թէ որ ճանաչեցիր՝ մարդ ես որ մարդ:
 Գամ նստիմ արդտեղ, ինչ գործ ունիս հետս.
 Մաղը չինեմ՝ կապեմ իրար վրալ.
 Շուտ գործ տես — կերթամ հետս չես կարող գալ
 Թէ որ ինձ ճանաչեցիր՝ մարդ ես որ մարդ:

Ուստա Վանօն ասաց ինքնուրոյն այս թէջլիսը *)
 Թէ գործ տեսնել չգիտես՝ վէճի մի մտնիլ
 Հետդ կը կռուեմ՝ այն ժամանակ ինձ կը ճանաչես
 Ինձ թէ որ ճանաչեցիր՝ մարդ ես որ մարդ:

Այս բանաստեղծութիւնները նոր են, հեղինակները կենդանի և ոչինչ չեն արտայայտում, մինչև իսկ մի տեսակ հանելուկային են: Իսկ սիրային, հայրենասիրական կամ այլ այլ երգեր մինչև այժմ ինձ չյաջողուեց գտնել, բայց ինձ յայտնել են որ կան և յոյս ունիմ մօտիկ ապագայում մի քանի հատ ձեռք բերել:

Վերոյիշեալ երկու երգերից կտորներ, բայց բաւական զանազանութեամբ քաղել է պ. Գ. Վանցեանը («Մուրճ» 1892, եր. 1320—1321): Հանէս օղլու երգում մի քանի տողեր աւելի ճիշտ են երևում քան պ. Լալայեանի հաւաքածում: Ահա այդ վարիտները:

Հանէս օղլին պակրեց, լոմ եմ, ուշարեցէք **) տլարիս
 Ակ մը կայէն, չղար կայէն, աթ մը կայէն, ակ կայէն.
 Լոմ մը վեսած ֆենար, սաւը սընքէր պակրածս
 Վեսողները կամ նա զանեն, աթաւէս լէ դմրաւիս
 Հէւաւ կը կամաւտիք փանեցէք, սիսաւէս ջէ խլաւիս ***):

Թարգմանութիւն

Հանէս օղլին ասաց, լոմ եմ, անունս պահեցէք
 Մի անգամ, չորս անգամ, հինգ անգամ, մի անգամ.
 Մի բոշա նստած լինէր, ասածս բոլորը կը հասկանար
 Նստածները՝ չգիտեն որ ջութակս գնում է ձեռքիցս
 Նրանք բան են ասում, գլխիցս խելքս է գնում:

*) Այն երգերը որոնք դէպի միմեանց են ուղղում աշղները վէճի ժամանակ:

**) Պ. Վանցեանը գրել է ուշաւեցէք և թարգմանել՝ յայտնեցէք: Պիտի լինի ուշարեցէք — միտներդ պահէք, ուշաւել նշանակում է գնալ:

***) Այս կտորի մէջ սխալ պիտի լինի. աւելի ճիշտը հաւանական է այսպէս «Հէվաւը կամաւտիք կը փանեն» (նրանք բան են ասում):

Բ. ԵՐԳԻ ՎԱՐԻԱՆՏ.

Ուստա, աւեմ դուգահիդ, կէ դարես բաշտաս *)

Սամէիկարիմ ճարիս, բանթեմ կու դաստաս

Պհու (բուհու) որով նա եմ, նա բարիս (բարես) բաշտաս

Լորեցիր իսա՝ մանուս ես՝ մանուս:

Ուստա վանօն պակրեց տերաւէն թաջլիս

Կամ նա դանես իսա, նա պէսես մաջլիս

Սուլաւնոց կանեմ՝ կու սնանես կու զիս

Լորեցիր իսա՝ մանուս ես, մանուս:

Թարգմանութիւն

Ուստա, եթէ մօտդ դամ, ինչ ունիս ինձ հետ

Մաղս եմ կապում, դիզում դաստաս

Շատ մեծ չեմ, որ հետս մրցես **)


Թէ որ գտար՝ մարդ ես ու մարդ:

Ուստա վանօն ասաց իրենից թէջլիս,

Թէ բան չգիտես չմտնես վէճի

Շնանոց կը շինեմ ***), աչն ժամանակ ինձ կը ճանաչես:

Թէ որ իմացար՝ մարդ ես ու մարդ:



*) Ես միշտ ուղղում եմ սխալմամբ միասին կամ անճիշտ գրութեամբ բառերը:

**) Պ. վանցեանը թարգմանել է սոր չընկնես հետո: Բարեւ չընշանակում է, դուրս գալ, դաշտ ելնել մրցելու:

***) Այսինքն կռիւ կը ձգեմ: